գլխաւորաց ազգին, որք 'ի Նեղութեան տրամակից էին, և թախանձանօք խնդրէին լսել լուր ինչ աւետեաց։ Ահաւասիկ թարգմանութիւն հրովարտակին տուեալ Հայոց։

Ուղղեալ առ Կուսակալն Դամասկոսի՝ առ Դատաւորն Երուսաղէմի, առ գլխաւոր կրօնապետս տաճկաց, և առ ամենայն պաշտօնեայս Տէրութեան։ Ի հասանիլ Կայսերական հրովարտակիս գիտութիւն լիցի՝ բարեյիշատակ Նախնին իմ Սուլթան Սէլիմ առաջին, 'ի տիրել իւրում Երուսաղէմի տուեալէ Կայսերական հրովարտակ ազգին Հայոց 'ի թուին Հիճրէթի ९२३, վասն ուխտի տաճարին Ս. Յարութեան, որ ունի օրինակ զայս։

Օգնութեամբ բարձրելոյն Աստուծոյ և առաքելոյ Նորին՝ 'ի ২৫ Սէֆէր ամսոյ յերուսաղէմ 'ի տունն Աստուծոյ եկեալ՝ յաղթանակաւ մտաք 'ի քաղաքն · Սարգիս Պատրիարքն Հայոց առեալ ընդ իւր զբոլոր միաբանս եկն 'ի հնազանդութիւն եւ 'ի հպատակութիւն ինձ՝ աղաչանօք խնդրեաց զչնորհս և զպարգեւս իմ. տիրել Պատրիարքացն Հայոց ըստ վաղեմի դաշնադրութեան իւրեանց՝ եկեղեցեաց վանօրէից և այլ ուխտատեղեաց թէ 'ի ներքս և թէ յարտաքս, որպէս տիրեալ և ժառանգեալ են 'ի վաղ ժամանակաց։ Եւ ըստ տրամադրութեան դաշնադրոյն մեծին Օմարայ և 'ի ժամանակէ Մէլիք Սալահատտինի տուեալ հրովարտակաց, տիրել և ժառանգել այսոցիկ տեղեաց, որք են՝ 'ի տաճարին Ս · Յարութեան, 'ի Բեթղեհէմ Այրն և դուռն հիւսիսային, մեծ եկեղեցին Ս · Յակոբայ, Սուրբ Հրեշտակապետ, Ս · Փրկիչ, Նազարէս։ Եւ եկեղեցւոյ նոցին հետեւողք և համազգայինք, Հապէշք, Գրէթիք՝ և Ասորիք, տիրել և ժառանգել Պատրիարքացն Հայոց, որք նստին 'ի վանս Ս · Յակոբայ՝ և չլինիլ երբէք ձեռնամուխ յօտարաց։ Ուստի ետու զայս Կայսերական երջանիկ նըշանս եւ հրամայեցի առնել ըստ զօրութեան սորին, զի Պատրիարքունք Հայոց որք նստին 'ի մեծ վանքն Սուրբ Յակոբայ, տիրեսցեն և ժառանգեսցեն ըստ օրինաց իւրեանց թէ 'ի ներքս և թէ յարտաքս եկեղեցեաց, վանօրէից և այլ ուխտատեղեաց, հետեւակ և համազգայնոց իւրեանց, որք են Հապէշք, Գրէթիք և Ասորիք։ Եւ մի ոք յօտարաց հակառակեսցի 'ի տնօրինելն զգործս նոցին կար-